## Ի Տօնախմբութեան Անուան Ս. Եհ. Կաթուղիկոսի առաւօտեան մաղթանքին ժամանակ ընթերցուած երկու ողերձները ։

Ադինավայր ո՛ 'ի ծագաց զծեղ որդիք Հայրենեաց,
Ըստ ակմբեաց տօնել զՀանդէս Պատրիարքիս Ս. Եհարանց.
Շքեղ այս ի նչ համազգային ծէս սրբազան գեղապանծ,
Զոր վերնական սուրբ Տեսչութիւնն յաներևութս ներգործեաց ։
Ա՛հ. զի ննջեն երգիչք Գողթան, թող յուլս բարձցեն զքնար,
Ըստ վարժ մատամբ շարժել գողարիկ կնդնդոցաւ զոսկեայ լար.
Ինձ ձայնակից կացցեն յայս տօն սարկաւագունք սուրբ երգոց,
Զաւիթն երգել մեր պարծանաց ներբողենեօք բազմափորձ ։
Հայաստանեայց, քանզի մեծի Հայրապետիս Ս. Եհափառ,
Տօն փառաւոր տարեկանաց արդ բոլորի նոր սուրբ դար.
Ամենազօր՝ ում Ային աջ եօծ իւղով սրբարար,
Կարգեալ Հօտին և Տան իւրոյ Հովիւ հսկօղ բարեփառ ։
Ո՛վ Խնդութեանս, մայրն Սիօն սուրբ փեսային փառացի,
Ընդառաջէ մանկամբ իւրով հրեշտակակրօնս սուրբ ուխտի.
Եռախտապարտ հոգւով պլպրտիս հատուցանել նուիրական,
Զանուն Մորին տալ 'ի հուչակ դարուց 'ի դարս անխափան ։
Հանդիսացի մեծն Գրիգոր Հայրապետաց սուրբ պարուք,
Զգահակալիս արժանագով դիտել զփառս և զշուք.
Որ ուխտապահ սուրբ աւանդից նոյն և կրօնից Հայրենի,
Զանձն իւր նուիրէ Ազգին 'ի սէր յայն ապարեզ պաշտելի ։
Հանդիսացին պետք քերթողաց Սահակ, Մեսրովբ, Եղիշէ,
Մովսէս, Դաւիթ, Եզնիկ, Կորիւն, նոյն վերծանօղն Մամբրէ.
Զի քաջաբեր տուք ցորեան նոցին սերմանց գիտութեան,
Սոխաւ 'ի հունձս հասեալ յամբարս շեղջակուտի Հայկազեան ։
Աւրէ. հաս ժամ՝ որ ցնծալից՝ ժամ երջանիկ բերկրութեան,
Յորում խնդայ տունն Արամեան Ս. Եհիդ 'ի փառս յաւերժեան,
Ընձիւղ սրտից զեղձ պատարագ մատուցանէ յողջակէզ,
Յաստուածային 'ի սուրբ սեղան զաղօթս ուղղեալ մաքրապէս ։

Օրհնեալ է Տէր, զէլ Ձեր և զմուտս յարարս գործոց գովեմ,
Բարձրացուցէ զեղջիւր փառացդ ՚ի սփոփանս Սիօնի.
Հոգւով շնորհաց և զօրութեան իմաստութեան հանճարոյ,
Լի արասցէ զՁեզ ՚ի շրջանս երկար աւուրց խնկելոյ,
Հապա և դուք յօր սուրբ տօնիս հանդիսադիր Բարերարք,
Օրհնեցէք կեանս Հօր մեր Սէհի պահել զՍա անվնաս.
Որ ՚ի հովուել արդարութեամբ և իրաւամբ զիւրն զհօտ,
Դալար ՚ի վայրս յօրէնս ամբիծս պատուիրանաց անաղօտ,
Նոր Սիօնի յառաջ մատիք մանկունք ՚ի ձայն օրհնութեան,
Որ սուրբ Հոգին զօրհներգութեամբ զերգ վեր երգել միաբան.
Կեցցէ՛ Տէր մեր. միշտ անսասան յաթոռ սրբոյն Գրիգորի,
Լրութեան Ազգիս Եկեղեցւոյ փառք և պարծանք Հայկազնի.

Շարադրեաց և ընծայ
Սարկ. Արշակ Տէր Ղազարեանց.

---

## Քրիստոսապսակ Սէհ Հայրապետ
## եւ
## Սրբազումար Հանդիսականք

Զարթիր զարթիր ձոխ Արարատ և ամպաձեմդ Մասիս,
Եւ Հայաստան խրախացիր ՚ի մեծաշուք ՚ի տօնիս.
Սրբազումար ակումբք չքնաղ ժողովրդոց Հայկազեան,
Հրճուեցարուք հոգենուագ պէս պէս երգօք տաղաղեան,
Զի քաղցր է մեզ այսօր յայտնել զսրտից մերոց զցնծութիւն,
Եւ զի ՚ի ձայն հայցել ՚ի քէն զառատաբուղխ օրհնութիւն.
Քեւ գլուխ օծեալ. քեւ սաստ հրճուիմք մեք խնդութեամբ անկեղծիկ
Եւ քեւ յաւէտ զուարթացին մերս հայրենեաց սուրբ տեղիք.
Ընեղն իսկ՝ յանտրտմական յիւրում բնութեան գերբնական,
Ընդ գործակցս յաւուրս տօնիդ շարժի ՚ի խինդ բերկրական.
՚Ի վաղնջուց չունէաք մեք թագակորոյս յԱրարատ
Պարթեւազնեայ խնամօղ Ազգիս և Հովուապետ գթառատ,
Այսօր հրեշտակք ուրախանան գունդք ընդ գնդից ՚ի յերկին,
Ընխութական առեալ տաւիղ զերգս յօրինեն քաղցրագին.
Դասք Գրիգորեանց դասք Ներսիսեանց դասք Մեսրոպայ խմբովին,
Քեւ նոր իմն ուրախութեամբ փառս ձօնեն Ընեղին.